

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի պաշտոնակատարի 31.01.2019 թ. թիվ 75 Լ/Կ հրամանի

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Մշակող մարմին՝ ՎՊՀ ՈԱԿ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 1 24.01.2019թ.

Վանաձոր

2019թ.

Ամփոփ համառոտագիր

Վանաձորի Պետական Համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում ուսուցման առկա և հեռակա համակարգերում պետական պատվերի շրջանակներում և վճարովի հիմունքներով տարածաշրջանային ու հանրապետական մասշտաբներով բարձր մրցակցային դաշտում ՈԱՇ-ի մակարդակներին համապատասխան, ղեկավարվելով բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական չափորոշիչներով:

Համալսարանը՝ հաշվի առնելով ուսանողների, այլ շահակիցների ու հասարակության կարիքները, սպասումները, պատասխանատվություն է կրում իր կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի ապահովման համար և աջակցում է որակի մշակույթի զարգացմանը: Համալսարանի որակի ապահովման համակարգը ներառում է հաստատության բոլոր ենթակառուցվածքները, օղակները, կառավարման մարմինները, պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ուսանողները և կազմակերպչական, կրթական, դաստիարակչական, գիտական, տեղեկատվական, մշտադիտարկման և աուդիտի արդյունքների վերլուծության, քննարկման ու բարելավման ծրագրերի իրականացման, հասարակության հետ հետադարձ կապերի ապահովման գործընթացները և նախատեսում է.

- կառավարման, կրթական և գիտահետազոտական գործընթացների արդյունավետ համակարգում, որակի ապահովում;
- շահակիցների կողմից պահանջարկված կրթական ծրագրերի մշակում, ներդրում և իրականացման որակի ապահովում;
- ուսանողակենտրոն ուսումնառության և դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատում, առավելությունների բացահայտում, գործընթացի որակի ապահովում;
- ուսուցման և գիտահետազոտության զուգակցման արդյունավետության գնահատում, որակի ապահովում;
- մտավոր, գիտատեխնիկական, կորպորատիվ մշակութային պոտենցիալ ունեցող միջավայրի որակի ապահովում, զարգացում;
- անհատի շարունակական կատարելագործման, զարգացման պայմանների բարելավում;

- հանրային վստահության և պատասխանատվության բարձրացում;
- ուսանողների՝ որպես անհատների, ակտիվ քաղաքական դիրքորոշման նախապատրաստում;
- շրջանավարտների կարերիայի ընտրության աջակցություն:

Համալսարանի Որակի ապահովման համակարգի գործունեությունը պայմանավորված է բարձրագույն կրթական Եվրոպական տարածքում (ESG) գործող չափանիշներով, չափորոշիչներով և ինստիտուցիոնալ կարողություններով: ՈԱ համակարգի ռազմավարությունը նպատակաուղղված է համալսարանի ինստիտուցիոնալ գործունեության և գիտակրթական վերջնարդյունքներին միտված ծրագրերի իրականացման գործընթացների որակի ապահովմանը:

ՎՊՀ որակի ապահովման քաղաքականությունը իրականացվում է համալսարանի տեսլականին, առաքելությանը և բնագավառի ռազմավարությանը համապատասխան, կանոնակարգերի և ընթացակարգերի հիման վրա, որոնք մշակվում են և գործընթացները համակարգվում համալսարանի կառավարման մարմինների ու որակի ապահովման կենտրոնի կողմից:

Ներածություն

Վանաձորի Պետական Համալսարանը 21-րդ դարի մարտահրավերներին համապատասխանող որակյալ կրթության և գիտահետազոտության ապահովման նպատակով բարեփոխումներ է իրականացնում Բոլոնյան գործընթացի սկզբունքներին համապատասխան՝ ձգտելով ստեղծել ազգային պետական քաղաքականության սկզբունքներին և հասարակության պահանջներին ներդաշնակ միասնական կրթական դաշտ:

ՎՊՀ-ի որակի ապահովման համակարգը հիմնված է բարձրագույն կրթության Եվրոպական տարածքում որակի վերահսկման, գնահատման սկզբունքների և Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված չափորոշիչների ու երաշխավորագրերի համադրության, ինչպես նաև մասնագիտական կրթության որակի ապահովման Ազգային Կենտրոնի կողմից մշակված չափորոշիչների վրա:

ՎՊՀ-ի Որակի ապահովման համակարգի առաքելությունը բխում է համալսարանի առաքելությունից և բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին

ապահովման եվրոպական չափորոշիչներից ու ուղեցույցներից (ESG) և հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- ✓ Համալսարանում կրթության որակի ապահովման գործընթացը համապատասխանում է ENQA-ի կողմից ձևակերպված պահանջներին ու սկզբունքներին:
- ✓ Համալսարանը պատասխանատվություն է կրում իր կողմից տրամադրվող կրթության և գիտահետազոտության որակի և արդյունավետության համար:
- ✓ Համալսարանը երաշխավորում է պետական կրթական չափորոշիչներով մշակված կրթական ծրագրերի իրականացումը:
- ✓ Համալսարանի Որակի ապահովման ներքին չափորոշիչների ձևավորման և կիրառման գործընթացների բոլոր մակարդակներում մասնակցային սկզբունքով ակտիվորեն ներգրավված են շահակից կողմերը;
- ✓ Համալսարանը կրթական ծրագրերի յուրացման համար ուսանողներին ապահովում է անհրաժեշտ պայմաններով՝ ներառյալ որակավորված պրոֆեսորադասախոսական կազմ, լաբորատոր և կաբինետային ռեսուրսներ, գրադարանային և տեղեկատվական սպասարկում, մարզա- առողջարանային հանգստի և սոցիալական աջակցություն:

ՎՊՀ-ի որակի ապահովման ռազմավարությունը նպատակաուղղված է ուսանողների հետազոտական գործունեության և ուսումնառության արդյունավետ զուգակցանք, կրթական և գիտահետազոտական գործունեության որակի բարձրացմանը, միջազգայնորեն փոխադարձ վստահության և ուսանողների ու դասախոսների շարժունության ապահովմանը, համալսարանի կողմից շնորհվող որակավորումների միջազգային ճանաչմանը:

Համալսարանի որակի ապահովման ընթացակարգերը մշակված են բուհի ռազմավարական նպատակների և խնդիրների հիման վրա ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ՝ հաշվի առնելով իրավական նորմատիվային պահանջները:

Նախապատմություն

Որակի ապահովման համակարգի և մշակույթի ձևավորմանն ուղղված քայլերը ձեռնարկվել են տարիներ առաջ՝ պայմանավորված Բոլոնյան գործընթացի մարտահրավերներով, մասնավորապես՝

- ներմուծել համընթեռնելի և համադրելի որակավորումների եռաստիճան համակարգ,
- կատարել անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգին՝ միաժամանակ նախաձեռնելով կրթական ծրագրերի արմատական վերափոխումներ,
- ներդնել մասնագիտական կրթության որակի գնահատման և ապահովման եվրոպական չափանիշներ՝ նպաստելով որակի հավաստման ազգային համակարգի ստեղծմանը,
- կրեդիտների կուտակման և փոխանցման, որակի գնահատման և ապահովման համակարգերի, որակավորումների ճանաչման թափանցիկ ընթացակարգերի, ինչպես նաև դիպլոմի համաեվրոպական հավելվածի ներդրման միջոցով խթանել ուսանողների և դասախոսների շարժունությունն ու Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի գրավչությունը,
- ստեղծել նախադրյալներ շարունակական կրթության համակարգի ձևավորման և զարգացման համար,
- բարձրացնել ուսանողների դերը և մասնակցությունը՝ մասնավորապես բուհերի կառավարման գործընթացում,
- ինտեգրել կրթական և գիտահետազոտական գործընթացները բուհում:

Վերոնշյալ մարտահրավերների ներքո Բուհի քաղաքականության վերհանման և հստակեցման նպատակով Համալսարանի գիտխորհրդի որոշմամբ 2009թ. ձևավորվել է որակի վերահսկման հանձնաժողով: Կարիքների վերհանման, ծագող խնդիրների լուծման և Որակի ապահովման գործընթացի համակարգման, համալսարանում համապատասխան մշակույթի ձևավորման նպատակով 2010 թ. հիմնվել է Կրթության որակի ապահովման կենտրոնը (ԿՈԱԿ), որպես ինքնուրույն ստորաբաժանում, ուսումնագիտական գծով պրոռեկտորի ենթակայության տակ: 2010-2013 թթ. կենտրոնի կողմից իրականացվել են որակի ապահովմանը ուղղված մի շարք վերապատրաստումներ, որոնց մասնակցել են ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, վարչական աշխատողներ և ուսանողներ: Առավել ակտիվ մասնակիցների կազմից 2011թ.-ին ձևավորվել են որակի ապահովման ֆակուլտետային հանձնախմբեր՝ ակտիվ ուսանողների և դասախոսների ներգրավմամբ:

2011-12 թթ. ԿՈԱԿ-ի կողմից իրականացվել է Բարձրագույն և հետբուհական հաստատություններում կառավարման գործունեության թափանցիկության և

հաշվետվողականության համակարգի դրամաշնորհային ծրագիր, որի արդյունքում ԿՈԱԿ-ը որպես ՎՊՀ կառուցվածքային ստորաբաժանում, դարձել է անկախ սեկտոր և ողակիր են հաշվետու է համալսարանի ռեկտորին:

2011-2013 թթ. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ԿՈԱԿ-ն իրականացրել է „Որակի ապահովման ներբուհական համակարգի ստեղծում և ամրապնդում” դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում կենտրոնը համալրվել է համապատասխան տեխնիկական միջոցներով, համակարգչային ծրագրերով և անհրաժեշտ գրականությամբ ու գույքով:

Ինստիտուտի ռազմավարական ծրագրի կատարման քայլերի վերլուծության արդյունքում 2013 թ. սեպտեմբերին ԿՈԱԿ-ի առջև դրվեցին նոր խնդիրներ և այն վերանվանվեց որակի ապահովման կենտրոն (ՈԱԿ), որպես նախադրյալ ոլորտի համալիր գործունեության, որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի մշակման և իրականացման գործընթացների համակարգման համար:

Խնդիրներ և նպատակներ

ՎՊՀ-ի Որակի Ապահովման Հայեցակարգում ներկայացված նպատակներն ու խնդիրները բխում են բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական տարածքում գործող չափանիշներից (ESG) և չափորոշիչներից: Ղեկավարվելով` ՀՀ ՈԱԾ-ի մակարդակներին համապատասխան, բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական չափորոշիչներով և ելնելով համապատասխան գործիքակազմի մշակման անհրաժեշտությունից, հայեցակարգում ներառված նպատակները կարող են դասակարգվել.

- ✓ Որակյալ մասնագետների պատրաստում, Բուհի կողմից տրվող որակավորման վկայականների, շնորհների և այլ փաստաթղթերի հավաստիության և գործատուների կողմից բարձր գնահատականի ապահովում;
- ✓ Կրթական ծառայությունների մատուցման որակի ապահովում, շահակիցների բավարարվածություն;
- ✓ Կրթական և գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության ու շահակիցների կողմից պահանջարկվածության բարձրացում;
- ✓ Մասնագիտական կրթության մատչելիության, թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

- ✓ Բուհի հանրային վստահության, պատասխանատվության բարձրացում;
- ✓ Արդիական հիմնարար և կիրառական գիտահետազոտությունների իրականացում, մրցունակության ապահովում;
- ✓ Կրթական ծրագրերի կատարելագործում, նոր ծրագրերի մշակում և ներդրում, իրականացման որակի ապահովում;
- ✓ Ուսումնառության, դասավանդման և գիտահետազոտության ռեսուրսների ապահովում և կայուն զարգացում երաշխավորող որակի ապահովման մեխանիզմների կատարելագործում;
- ✓ Ուսանողակենտրոն ուսուցման և դասավանդման մեթոդների ներդրում, ուսանողակենտրոն միջավայրի՝ որպես անհատի շարունակական զարգացման նախադրյալի, ձևավորում;
- ✓ Որակի ապահովման մեխանիզմների կատարելագործում, նոր որակի մշակույթի ձևավորում;
- ✓ Դասավանդման և ուսուցման արդյունավետության բարձրացում ուսանողակենտրոն մեթոդների, տեղեկատվական համակարգերի համակարգային ներդրման միջոցով;
- ✓ Ուսանողների ուսումնառության արդյունքների գնահատման համակարգի կատարելագործում, արդյունավետության բարձրացում;
- ✓ Կրթական բարեփոխումների մարտահրավերներին համապատասխան դասախոսական կազմի վերապատրաստում, մոտիվացիայի բարձրացում և որակի ապահովում;
- ✓ Մասնագիտական կրթության միջազգայնացում՝ որակի ապահովման միջազգային չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան;
- ✓ Ուսանողների և դասախոսների շարժունության պայմանների ու հնարավորությունների ապահովում;
- ✓ Արդյունավետ ուսուցման և արդիական գիտահետազոտությունների համար նյութատեխնիկական բազայի ապահովում ժամանակակից սարքավորումներով և տեխնիկական միջոցներով:

Համակարգի խնդիրները.

- ✓ Ելնելով շահակիցների կարիքներից, պարբերաբար վերանայել որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը՝ ուղորդելով այն

Համալսարանի ռազմավարական ծրագրերի իրականացմանը: Հիմնական ուշադրությունը կենտրոնացնել ուսանողակենտրոն դասավանդման և ուսուցման մեթոդների կիրառման, արդյունավետության բարձրացման, կրթական միջավայրի բարելավման կրթության և գիտահետազոտության զուգակցման, գիտահետազոտությունների արդյունքների ներդրման վրա;

- ✓ Պարբերաբար վերհանելով բուհի շահակիցների կարիքները և հաշվի առնելով նրանց մասնագիտական պահանջները, մշտադիտարկել, վերանայել և կատարելագործել գործող մասնագիտական կրթական ծրագրերը ՈԱՇ-ի ազգային մակարդակներին, ՈԱԱԿ-ի և ESG չափանիշներին համապատասխան;
- ✓ Մասնագիտական նոր կրթական ծրագրեր մշակել և ներդնել, ելնելով աշխատաշուկայի և շահակիցների կարիքներից, ինչպես նաև հանրապետության ու մարզի ռազմավարական զարգացման նպատակներից;
- ✓ Հետևողական աշխատանքներ կատարել ներդրված և նոր ներդրվող կրթական ծրագրերի՝ որակի ապահովման չափանիշներին համապատասխանեցման ուղղություններով;
- ✓ Շարունակել տեղեկատվական համակարգերի ներդրման քաղաքականությունը ուսումնական գործընթացում;
- ✓ Պայմաններ ստեղծել և լայնորեն ներգրավել ուսանողներին ու դասախոսներին արդիական հիմնարար և կիրառական գիտահետազոտությունների ոլորտ:
- ✓ Պայմաններ ապահովել դասախոսական կազմի կոմպետենտության և որակի անընդհատ բարձրացման համար վերապատրաստումների և կատարելագործման այլ մեխանիզմների միջոցով;
- ✓ Կատարելագործել ուսանողների ուսումնառության գնահատման մեխանիզմները, կիրառելով հետադարձ կապը՝ բարձրացնել գործընթացի արդյունավետությունը;
- ✓ Համակարգել և բարձրացնել համալսարանի կրթական ծառայությունների մրցունակության և ուսանողների ու դասախոսների շարժունության ապահովման, բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում կայուն մրցակցային դիրքի ամրապնդման ուղղությամբ կատարվող աշխատանքների արդյունավետությունը;
- ✓ Հետևողականորեն իրականացնել մասնագիտական կրթության՝ որակի ապահովման միջազգային չափանիշներին համապատասխանեցման գործընթացը;

- ✓ Ապահովել համալսարանի կրթական, դաստիարակչական, գիտահետազոտական և տեղեկատվական ոլորտների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը;

Առաջարկվող լուծումներ

ՎՊՀ-ի ՈԱ համակարգում իրականացվող լուծումները բխում են նրա զարգացման ռազմավարությունից և քաղաքականությունից.

- ✓ Կրթության և գիտահետազոտության արդյունավետ զուգակցում, որակի համապատասխանեցում բարձրագույն կրթության Եվրոպական տարածքի (ESG) և ՈԱԱԿ-ի համակարգում գործող չափանիշներին ու չափորոշիչներին:
- ✓ Պրոֆեսորադասախոսական կազմի ՈԱ մոտիվացիայի բարձրացման արդյունավետ մեխանիզմների ներդրում. նյութական և ոչ նյութական խրախուսում, սոցիալական ապահովման քաղաքականության մշակում, կատարելագործում:
- ✓ Ուսանողակենտրոն դասավանդման և ուսումնառության մեթոդների, տեխնոլոգիաների որակի ապահովման մեխանիզմների ներդրում, արդյունքների գնահատում, հետադարձ կապի իրացում, համապատասխան մշակույթի ձևավորում:
- ✓ Մատուցվող կրթական ծառայությունների բարելավման, որակի ապահովման մեխանիզմների կատարելագործում, արդյունավետության բարձրացում:
- ✓ Արտաքին շահակիցների և շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմների կիրառում:
- ✓ Վերապատրաստումների, խորհրդատվական ծառայությունների, քննարկումների միջոցով ներքին շահակիցների ակտիվության բարձրացում ՈԱ համակարգի զարգացման և մշակույթի ձևավորման նպատակով:
- ✓ Համալսարանի մասնագիտությունների միակողմանի ուղղվածության աստիճանական վերացում, և աշխատաշուկայի պահանջների փոփոխման նկատմամբ ճկունության դրսևորման միտումներ:
- ✓ Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակազմի որակավորման բարձրացման համակարգի ՈԱ չափանիշների և մեխանիզմների կատարելագործում:

- ✓ Կիրառական բնույթի արդիական գիտական թեմաների մշակման գործում այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակների և հնարավորությունների ընդլայնում, արդյունավետության բարձրացում:
- ✓ Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների շարժունության ապահովման նպատակային քաղաքականության իրականացում. պայմանների ապահովում, ուսանողների և դասախոսների կողմից օտար լեզուների իմացության հետ կապված դժվարությունների հաղթահարում, համապատասխան կրթական միջավայրի աստիճանական ստեղծում, ծագող խնդիրների հրատապ լուծում, ներքին օրենսդրական դաշտի համապատասխանեցում, շարժունությանը և միջազգայնացմանը նպաստող ընթացակարգերի և մեխանիզմների կատարելագործում:
- ✓ Բնագավառում ծագող ռիսկերի գնահատմանն ու կանխարգելմանն ուղղված աշխատանքների ընդլայնում, կատարելագործում, արդյունավետության բարձրացում:

Առավելություններ

- ՎՊՀ-ը ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ իրականացնում է որակի ապահովման քաղաքականություն , որը հանդիսանում է նրա ռազմավարության մաս և մատչելի է հասարակությանը:

- Համալսարանում գործում է նախապես որոշված և հրապարակված միասնական կարգ, որն ընդգրկում է ուսանողական «կյանքի շրջափուլի» բոլոր էտապները՝ ընդունելություն, առաջադիմություն, ճանաչում և որակավորում:

- ՎՊՀ-ի ՈԱԿ-ը իր առաքելությանը և նպատակներին համաձայն իրականացնում է գործընթացներ, որոնք նպաստում են ՈԱ չափանիշների և չափորոշիչների ներդրմանն ու կատարելագործմանը.

- Կատարելագործվում է Համալսարանի որակի կառավարման համակարգը: Ներդրված են կրթության կառավարման և կրթական գործընթացներում նորարարական տեխնոլոգիաների օգտագործման ՈԱ մեխանիզմներ:

- Որակի ապահովման գործընթացները համակարգվում և ուղղորդվում են ՈԱԿ-ի կողմից՝ ՈԱ չափանիշերին, չափորոշիչներին համապատասխան, կանոնակարգերի հիման վրա մշակված ընթացակարգերով, որոնք պարբերաբար վերանայվում են,

վերամշակվում և կատարելագործվում շահակիցների՝ բացահայտված կարիքների և գործատուների պահանջների հիման վրա:

- ՈԱԿ-ը համակարգում է ՈԱ գործընթացները համալսարանի տարբեր օղակներում:
- Ապահովում է շահագրգիռ կողմերի մասնակցությունը ՈԱ մեխանիզմների մշակման և ներդրման գործընթացին:
- Ներկայացնում է հաշվետվություններ իրականացված ուսումնասիրությունների և առաջարկությունների վերաբերյալ:
- Մշակում է ՈԱ գործիքակազմը և գնահատման ցուցիչները:
- Համակարգում և ուղղորդում է ֆակուլտետների ՈԱ աշխատախմբերի գործունեությունը;

Ֆակուլտետների ՈԱ աշխատախմբերը.

- Համակարգում են ֆակուլտետների ՈԱ գործընթացները, ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցությամբ:
- Վերահսկում են ֆակուլտետների ՈԱ գործընթացների փաստաթղթավորումը:
- Մասնակցում են ֆակուլտետների կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներին:
- Մասնակցում են Համալսարանի ՈԱ քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին:
- Պատասխանատու են ֆակուլտետների ՈԱ առաջարկությունների հիման վրա մշակված բարելավման ծրագրերի իրականացման համար:
- Հաշվետու են ֆակուլտետի խորհրդին:
- Համալսարանում մշակված ՄԿԾ-երի կազմման կարգը և ներդրման ընթացակարգը, հաշվի է առնում շահակիցների կարիքները, կրթության նպատակը և վերջնարդյունքների համապատասխանությունը ՈԱՇ-ի ազգային մակարդակներին ու Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորման (ESG) կառուցվածքին:
- Ուսումնական և կառավարման ոլորտներում մշտապես կատարելագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաների և նյութատեխնիկական միջոցների կիրառման մեխանիզմները:

- Համալսարանի ՈԱ գործընթացները, որին մասնակցում են ներքին և արտաքին շահակիցները, համակարգվում են և կառավարվում ՈԱԿ-ի և համալսարանի ղեկավարության կողմից:

- Աշխատանքներ են տարվում մշտադիտարկման և աուդիտի համակարգի կատարելագործման ուղղությամբ:

- Որակի ապահովման համակարգում գործում են մասնագիտացված աշխատանքային խմբեր՝ Համալսարանի Որակի Ապահովման Կենտրոնի աշխատակազմ և ֆակուլտետային ՈԱ աշխատանքային խմբեր:

- Որակի ապահովման կենտրոնը իրականացնում է կրթական և կառավարման գործընթացների մշտադիտարկում, իրազեկում և առաջարկում համապատասխան շտկողական գործողություններ՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ:

- Պարբերաբար ուսումնասիրվում են աշխատաշուկայի կարիքները, գործատուների պահանջները, գնահատվում ռիսկերը և ներկայացվում առաջարկություններ ՄԿԾ-երի վերանայման և կատարելագործման վերաբերյալ:

- Համալսարանում քաղաքականություն է վարվում ՈԱ գործընթացներում շահակիցների մասնակցության ավելացման և ակտիվության բարձրացման ողղությամբ: Մշակված են և ներդրվում են շահակիցների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված մեխանիզմներ ՈԱ մշակույթի ձևավորման գործընթացում:

- Համալսարանի Շարունակական կրթության կենտրոնը համակարգում է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և կոմպետենտության բարձրացման գործընթացները:

- Կարերիայի կենտրոնը մշտադիտարկում է աշխատաշուկայի իրավիճակը, վերհանում կարիքները, ճշտում պահանջները՝ շրջանավարտներին իրազեկելու և կողմնորոշելու նպատակով:

- Համալսարանը մասնակցում է որակի ապահովման ներդրմանն աջակցող դրամաշնորային ծրագրերում:

- Համալսարանում իրականացվում է կրթության միջազգայնացման և պրոֆեսորադասախոսական կազմի ու ուսանողների շարժունությունն ապահովող քաղաքականություն:

- Համալսարանում պաշտոնապես ապահովվում է ՈԱ գործընթացների թափանցիկությունը և մատչելիությունը բոլոր շահակիցների համար:

- Համալսարանի կառավարման, կրթական և հետազոտական գործունեության որակի ապահովման գործընթացը և ընթացակարգը պարբերաբար մշտադիտարկման է ենթարկվում որակի ապահովման արտաքին գործակալությունների փորձագետների կողմից՝ ESG չափանիշներին համապատասխան:

Ֆինանսական գնահատական

Համալսարանի ֆինանսական վիճակը հարաբերականորեն կայուն է, որը կարող է լիովին համապատասխանել ռազմավարական նպատակներին կառավարման ճկուն քաղաքականությամբ և կանխատեսումներով՝ հաշվի առնելով ֆինանսական ելքերի ու մուտքերի նախահաշիվը երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ կտրվածքով, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների ներհոսքի նպատակային ու ռացիոնալ օգտագործման հնարավորությունները:

Ամփոփ եզրակացություն

Համալսարանի կառավարման համակարգի, վարչական կառույցների գործունեությունը միտված է բուհի առաքելության ու նպատակների իրականացմանը և պահպանում է կառավարման էթիկայի նորմերը:

Մասնագիտական կրթական ծրագրերի մասնագիտական ուղղվածությունը և որակը համապատասխանում են համալսարանի առաքելությանը, տարածաշրջանի զարգացման նպատակներին, աշխատաշուկայի պահանջներին և նպաստում են համալսարանի կրթության միջազգայնացմանը և ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Համալսարանում գործում են կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ներդրման, որակի գնահատման, մշտադիտարկման և դրանց պարբերաբար վերանայման կարգեր, ընթացակարգեր, մեխանիզմներ:

Առաքելության և ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար Համալսարանը ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով ու մասնագիտական պատրաստվածություն ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական կազմով:

Համալսարանում ձևավորված է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակի ապահովման համակարգ, որի կարգերը և ընթացակարգերը պարբերաբար վերանայվում և կատարելագործվում են՝ գործընթացում ծագող կարիքներին և պահանջներին համապատասխան:

Ուսանողները ներգրավված են Համալսարանի գործունեության գնահատման և որակի ապահովման գործընթացներում և նրանց ցույց է տրվում աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետության ապահովման ու զարգացման համար:

Ներդրված են հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցող որակի ապահովման և գնահատման մեխանիզմներ:

Համալսարանում առկա են ուսանողակենտրոն ուսուցման և դասավանդման մեթոդների ներդրման և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և կադրային ռեսուրսներ, ենթակառուցվածքներ:

Համալսարանում առկա են կրթական ծրագրերի և ընթացիկ աշխատանքների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, գնահատման, վերլուծության և կիրառությունների գնահատման մեխանիզմներ:

Համալսարանի Որակի ապահովման ներքին համակարգը նպաստում է հաստատության կառավարման, կրթական, գիտահետազոտական, կազմակերպական, դաստիարակչական գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Արտաքին կապերի միջոցով փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծման նպատակով համալսարանում իրականացվում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն և գործում են համապատասխան ընթացակարգեր, որակի ապահովման մեխանիզմներ:

